

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6/1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Ք.Երևան  
Ժ.12.00

13 սեպտեմբերի 2011թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 40 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ Վ. Առաքելյանը, Վ. Վարդանյանը, քաղաքապետի գլխավոր խորհրդական Դ. Մելքոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը, քաղաքապետի մամլո քարտուղար Շ. Սարդարյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է. Ներսիսյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի տեղակալ Զ. Հակոբյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը, աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության առաջատար մասնագետ Հովհաննես Ղալեյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Քաղաքապետ Կ. Կարապետյանը, հիմք ընդունելով Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը, առաջարկեց Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգի նախագծից հանել «Երևան քաղաքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարի 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» Երևանի ավագանու իրավական ակտի նախագիծը:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Գումար հատկացնելու մասին:
5. Գումար հատկացնելու մասին:
6. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N224-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
7. Գույք ընդունելու մասին:
8. Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն օպերատորների միջոցով իրականացնելու մասին:
9. ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի Ք. Քուշնարյանի անվան թիվ 10 արվեստի դպրոց», «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի Բարսեղ Կանաչյանի անվան թիվ 17 արվեստի դպրոց», «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի N22 գրադարան» և «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության և դրանց կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
10. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
11. Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
12. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին:
13. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
14. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
15. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
16. «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի մի մասը հետ վերցնելու և այն Լեոնային Ղարաբաղի Հանրապետությանը նվիրելու մասին:
17. Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 16-ի հ.3719-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:
18. Գույքը ժամանակավոր տրամադրելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** – Օրակարգի հաստատման մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**2. ԼՍԵՑԻՆ** – Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Ստեղծել Երևանի ավագանու վեցերորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Սուրեն Ներսիսյան – «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն

Մանվել Ավետիսյան – «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն

Զիվան Պողոսյան – «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

Արմեն Հակոբյան – «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**3. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման N 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ (ՄՕՏԲ)» գլխի «Աջափնյակի սոցիալական ծառայությունների տարածքային բաժին» ենթազույգը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<b>3,1</b>	<b>Աջափնյակի սոցիալական ծառայությունների տարածքային բաժին</b>				
1	բաժնի պետ	1	140,0		140,0
2	բաժնի պետի տեղակալ	2	90,0		180,0
3	գլխավոր մասնագետ	1	85,0		85,0
4	գլխավոր մասնագետ	1	75,0		75,0
5	գլխավոր մասնագետ	6	65,0		390,0
6	առաջատար մասնագետ	5	60,0		300,0
7	առաջին կարգի մասնագետ	1	60,0		60,0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>17</b>			<b>1230,00</b>

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ (ՄՕՏԲ)» գլխի «Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ծառայությունների տարածքային բաժին» ենթազույգը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<b>3,7</b>	<b>Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ծառայությունների տարածքային բաժին</b>				
1	բաժնի պետ	1	140,00		140,0
2	բաժնի պետի տեղակալ	2	91,00		182,0
3	գլխավոր մասնագետ	1	77,00		77,00
4	գլխավոր մասնագետ	10	72,00		720,00
5	առաջատար մասնագետ	5	69,00		345,00
6	առաջին կարգի մասնագետ	1	66,00		66,00
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>20</b>			<b>1530,00</b>

3) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ (ՄՕՏԲ)» գլխի «Քանաքեռ-Զեյթունի սոցիալական ծառայությունների տարածքային բաժին» ենթազույգը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<b>3,12</b>	<b>Քանաքեռ-Զեյթունի սոցիալական ծառայությունների տարածքային բաժին</b>				
1	բաժնի պետ	1	140,0		140,0

2	բաժնի պետի տեղակալ	1	81,0		81,0
3	գլխավոր մասնագետ	7	72,0		504,0
4	առաջատար մասնագետ	5	71,5		357,5
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>14</b>			<b>1082,5</b>

և այդ կապակցությամբ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ սոցիալական ծառայություններ» տողի «13141,69» թիվը փոխարինել «13283.59» թվով,

4) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ» գլխի «Նոր Նորքի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին» ենթագլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<b>4,7</b>	<b>Նոր Նորքի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին</b>				
1	բաժնի պետ	1	95,0		95,0
2	առաջին կարգի մասնագետ	4	50,0		200,0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>5</b>			<b>295,0</b>

5) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններ» գլխի «Քանաքեռ-Զեյթունի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին» ենթագլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<b>4,9</b>	<b>Քանաքեռ-Զեյթունի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին</b>				
1	բաժնի պետ	1	75,0		75,0
2	առաջին կարգի մասնագետ	2	35,0		70,0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>3</b>			<b>145,0</b>

և այդ կապակցությամբ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՔԿԱԳՏԲ» տողի «2235.40» թիվը փոխարինել «2271,8» թվով,

6) «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «234292,09» թիվը փոխարինել «234470,39» թվով,

7) «Ամբողջը» տողում «312551,59» թիվը փոխարինել «312729,89» թվով:

2. Սույն որոշման գործողությունները տարածվում են 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**4. ԼՄԵՑԻՆ**– Գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 45,000.0 հազար դրամ Երևան քաղաքում անշարժ գույքի հասցեավորման և համարակալման ցուցանակների պատրաստման և տեղադրման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**5. ԼՄԵՑԻՆ** – Գումար հատկացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 29,718.0 հազար դրամ, որից՝

1) 8,260.0 հազար դրամ՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին՝ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ս. Շահումյանի հուշարձանի պատվանդանի և նրան հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների համաֆինանսավորման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածով,

2) 19,460.0 հազար դրամ՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին՝ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքների համաֆինանսավորման համար՝ բյուջետային ծախսերի

տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածով,

3) 1,998.0 հազար դրամ՝ Բագրևանդի փողոցին հարող տարածքում գտնվող դամբարանադաշտում հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ իրականացնելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N224-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N224-Ն որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ կետով.

«3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի օգոստոսի 1-ից»:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7. ԼՍԵՑԻՆ** – Գույք ընդունելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** –1. Որպես նվիրատվություն ընդունել «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Մամիկոնյանց 41 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 3-րդ հարկի 122.5քմ մակերեսով N6 և 69.8քմ մակերեսով N10 բնակարանները:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0

**8. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն օպերատորների միջոցով իրականացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է. Ներսիսյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հ. Պողոսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացնել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորների միջոցով:

2. Հավանություն տալ Երևանի քաղաքապետարանի կողմից մրցակցային երկխոսության ընթացակարգով՝ «ԵՔ-ՄԵՕՁԲ-11/1» ծածկագրով աղբահանության և սանիտարական մաքրման /ներառյալ ձմռան ամիսներին/ ծառայությունների ձեռքբերման նպատակով նախաձեռնած գնման գործընթացին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**9. ԼՍԵՑԻՆ** – ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի Ք. Քուշնարյանի անվան թիվ 10 արվեստի դպրոց», «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի Բարսեղ Կանաչյանի անվան թիվ 17 արվեստի դպրոց», «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի N22 գրադարան» և «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության և դրանց կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. <<ՀՀ Երևանի <<Կենտրոն>> համայնքի Ք. Քուշնարյանի անվան թիվ 10 արվեստի դպրոց>>, <<ՀՀ Երևանի <<Կենտրոն>> համայնքի Բարսեղ Կանաչյանի անվան թիվ 17 արվեստի դպրոց>>, <<ՀՀ Երևանի <<Կենտրոն>> համայնքի N 22 գրադարան>> և <<ՀՀ Երևանի <<Կենտրոն>> համայնքի <<Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական

դաստիարակության կենտրոն»» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները համապատասխանաբար անվանել «Երևանի Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոց», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N22 գրադարան և ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության Կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ:

2. Հաստատել «Երևանի Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոց», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N22 գրադարան և ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1, N 2, N 3 և N 4 հավելվածների:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան իրականացնել սույն որոշման 1-ին կետով նշված կազմակերպությունների ֆինանսային անվանման պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10. ԼՄԵՑԻՆ** – Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամներ Արա Մինասյանը և Հրաչ Պողոսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Տալ համաձայնություն՝ քաղաքացի Ռուբեն Կարախանյանի սեփականությունը հանդիսացող Գայի պողոտա հ.19/71 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի շինարարության համար տրամադրված 1800.0քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.02.2011թ. հ.2523497 վկայական), որպես համարժեք փոխանակություն, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գայի պողոտայի և Լվովյան փողոցի հատման մասում 1000.0քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**11. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի տեղակալ Ջ. Հակոբյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Երևանի Անդրանիկի փողոցի հ.122 շենքի հ.2ա բնակարանն /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 28.07.2011թ. հ.2713321 վկայական/ անհատույց օտարել /նվիրել/ Արմեն Մրավիկի Մկրտչյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**12. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի տեղակալ Ջ.Հակոբյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 3-րդ հարկի հ.9 երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Սուրիկ Դավթյանին, Ռուզաննա Դավթյանին, Անի Դավթյանին, Քնար Դավթյանին, Էլեն Աբրահամյանին, Էլիզա Աբրահամյանին, Գագիկ Պետրոսյանին և Սուսաննա Արզաքանցյանին:

2. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.60 երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Ալբերտ Մելքոնյանին, Կարինա Մելքոնյանին, Աննա Մելքոնյանին, Արտաշես Մելքոնյանին:

3. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 3-րդ հարկի հ.18՝ երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Գրիգոր Գասպարյանին, Հայկ Գասպարյանին, Հասմիկ Գասպարյանին, Նվարդ Հարությունյանին:

4. Աջափնյակ վարչական շրջանի, Միսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 3-րդ հարկի հ.49՝ երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Ռիտա Ջոհրաբյանին, Հեղինե Մուսայեյանին, Մելանյա Մուսայեյանին:

5. Աջափնյակ վարչական շրջանի, Միսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 2-րդ հարկի հ.4 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Խրիստաֆոր Խաչատրյանի ընտանիքի յոթ անձին՝ Խրիստաֆոր Խաչատրյանին, Արման Խաչատրյանին, Նարե Խաչատրյանին, Մարի Խաչատրյանին, Արեն Խաչատրյանին, Հասմիկ Ավետիսյանին և Գոհար Հովսեփյանին:

6. Աջափնյակ վարչական շրջանի, Միսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 4-րդ հարկի հ.52 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Սեդա Հարությունյանին, Անդրանիկ Զիրոյանին, Գոհարիկ Զիրոյանին, Արտուր Զիրոյանին, Գայանե Զիրոյանին, Սեյրան Հարությունյանին, իսկ հ.56 մեկ սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Արամ Հարությունյանին, Էդուարդ Վարդանյանին, Բելլա Խաչատրյանին, Դիանա Զիրոյանին, Սյուզաննա Զիրոյանին, Ռաֆիկ Զիրոյանին:

7. Աջափնյակ վարչական շրջանի, Միսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 5-րդ հարկի հ.14 մեկ սենյականոց բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Աշոտ Ասլեսյանին, Մաքրուհի Ասլեսյանին, Մարիամ Ասլեսյանին, Հակոբ Ասլեսյանին և Ժենիկ Պետրոսյանին:

8. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 7-րդ կետում նշված բնակարանի նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո՝ երկամսյա ժամկետում, Աջափնյակ վարչական շրջանի, Միսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ. 17 երկու սենյականոց բնակարանը փոխանակել սույն որոշման 7-րդ կետում նշված և Աշոտ Ասլեսյանի ընտանիքին նվիրված բնակարանի հետ՝ փոխանակվող բնակարանների նախահաշվային արժեքի տարբերությունը սույն կետում նշված ժամկետում՝ մինչև փոխանակության պայմանագիր կնքելը, վճարելու պայմանով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**13. ԼՍԵՑԻՆ** – Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի տեղակալ Զ.Հակոբյանը:

**ՈՐՈՇՎԵՑ-1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին Միքայելյան փողոցի հ.3 շենքի հ.80 բնակարանի Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 07.06.2011թ. հ.2752011 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ալլա Նուբարովային և Սարգիս Նուբարովին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**14. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի տեղակալ Զ.Հակոբյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լևոն Իգիթյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Նորաշեն թաղամասի հ.21 շենքի հ.93՝ 61.7քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.08.2011թ. հ.2661780 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արթուր Բունիաթյանին, Անահիտ Մեծլումյանին, Ջոան Բունիաթյանին, Էլիանորա Բունիաթյանին և Ռոան Բունիաթյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**15. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N194-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման վարչության առաջատար մասնագետ Հ.Ղալեյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների

չափորոշիչներն ու շնորհման կարգը սահմանելու մասին» N194-Ն որոշման Հավելվածով սահմանված կարգի՝

**1) Աղյուսակ 2-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43-րդ կետով՝**

43	Օլիելու և (կամ) չծխելու համար առանձնացված տարածքի առկայություն	0-3	0-3	0-3
----	--	-----	-----	-----

**2) Աղյուսակ 2-ի «Առավելագույն բալերի հանրագումարը» տողում «126» թիվը փոխարինել «129» թվով, «114» թիվը փոխարինել «117» թվով, իսկ «117» թիվը փոխարինել «120» թվով:**

**3) Աղյուսակ 3-ի «Որակի բարձրագույն աստիճան» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝**

Որակի բարձրագույն աստիճան	86-90 բալ ներառյալ	77-81 բալ ներառյալ	71-75 բալ ներառյալ	125-129 բալ ներառյալ	113-117 բալ ներառյալ	116-120 բալ ներառյալ
---------------------------	--------------------	--------------------	--------------------	----------------------	----------------------	----------------------

**4) Աղյուսակ 3-ի «Որակի առաջին աստիճան» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝**

Որակի առաջին աստիճան	81-85 բալ ներառյալ	72-76 բալ ներառյալ	66-70 բալ ներառյալ	120-124 բալ ներառյալ	108-112 բալ ներառյալ	111-115 բալ ներառյալ
----------------------	--------------------	--------------------	--------------------	----------------------	----------------------	----------------------

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40

դեմ – 0

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**16.ԼՍԵՑԻՆ** – «Ավ.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի մի մասը հետ վերցնելու և այն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը նվիրելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ.Մովսեսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի կազմից հետ վերցնել գրադարանի Ֆոնդերի Օգտագործման Պահոցի 1-ին գրապահոցից 867 կտոր գիրք՝ 50.876 /հիսուն հազար ութ հարյուր յոթանասունվեց/ դրամ և Ֆոնդերի Օգտագործման Պահոցի 2-րդ գրապահոցից 49 կտոր գիրք՝ 2350 /երկու հազար երեք հարյուր հիսուն/ դրամ

հաշվեկշռային արժեքով գույքը և այն նվիրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության տարելիցի կապակցությամբ:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**17. ԼՍԵՑԻՆ** – Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 16-ի հ.3719-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 16-ի «Պատմահնագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու և Երևանի քաղաքապետի 2011թ. հուլիսի 11-ի հ.3010-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին» հ.3719-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 40  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**18. ԼՍԵՑԻՆ** – Գույքը ժամանակավոր տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Կ. Մովսեսյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լևոն Իգիթյանը:

Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանն առաջարկեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2011 թվականի հոկտեմբերի 24-ին ժամը 12.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**